

ՇԱՐՋՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկեց
Խմբագրութեան հասցեին

—

Редакция на вестникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

—

Կրթութեան նախարարի
Արտասահմանի ձեռնիկ
(20 ՍՄՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռնիկ
(15 ՍՄՆԹԻՄ)

ԱՄԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ համար
Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 6 »

Արտասահմանի համար
Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 ՏՐԼ.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Իսկուցական տղայ առաջին
դասի համար 40 սանթիմ
Ե. իսկ վերջին երեսի համար
20 սանթիմ է. երեքին
անցի անգամներու համար
20 Օլց զեղջ կըլլայ :

Վառճայի համար ձեռնիկ 10 սանթիմ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Կ Ի Ր Ք Ը

Հայերիս մէջ այդ զըւելի յատկութիւնը իր գագաթնակէտին է հասել, աներեւակայելի աստիճանի է բարձրացել :

Հայը իր սեւ, ազտոտ կրքին բաւականութիւն տալու համար ամէն սրբութիւն զոհելու ընդունակ է. նա կարող է նոյնիսկ թրքանալ. օրինակ ձեզ հուշակատար Շահպաղ էֆէնտին, որը ի բնէ թէ լաւ և թէ խելացի մարդ էր, բայց թրքացաւ . . . լոկ կրքի համար :

Մեր կրքին ամէն բան զոհելու օրինակներ շատ կան, նրանց թւելը աւելորդ ժամավաճառութիւն պէտք է լինէր :

Բայց այս մասին հիմա խօսել ինձ ստիպեցին Վարնայի բուլգարական թերթերից մէկի մէջ գրված տողերը ուղղված հայ յեղափոխականներին հասցէին :

Բուլգար խմբագիրը ի հարկ է չը գիտէր որ այդ տողերը ուղղվում են հայ յեղափոխական կուսակցութեան պատիրականների հասցէին, որոնք բռնի կերպով երբէք գրամ չեն հանգանակած. այդ խմբագիրն ներշնչողը անշուշտ ու է ցածահոգի, թրքական արիւնով հայ է եղել. անպիտան հայ, որը իր բարկութիւնը ուրիշ կերպ չէ կարողացել թափել, բայց եթէ բուլգար քննադատներն իսպառելով, որպէս զի այնտեղ իրենց ատած, իրենց կողորդի փուշ, աչքերին գրող յեղափոխականներին մի քանի անվայել, ստորացնող մակդիրներ տրվեն, և յետոյ մի երկու ցածահոգի հայ գրչակներ էլ վեր կենան և իրենց թրքասիրական ձգտումները սքողելու համար, յայտարարեն թէ՛ տեսէք. բուլգար խմբագիրը ինչ է ասում այն գրամ հանգանակողների համար, որոնց մենք գէժ ենք :

Հայ յեղափոխութեան ամենակատաղի թշնամին ո՞վ է. Սուլթանը և նրա գործիքները խնդրեմ ասացէ՛ք մեր այդ ստոր գրչակները, մեր այդ հայերը որոնք նոյնիսկ պատաւոր բուլ-

գար խմբագիրներին սուտեր են ներշնչում մեր յեղափոխականներին հարածելու համար, ի՞նչով են տարբերվում այդ Սուլթանից և նրա գործիքներից : Ի հարկ է ոչնչով :

Եւ ի՞նչ կարող էք սպասել զուր այն գրչակներից, որոնք ժնէվի երիտասարդ թուրքերին, մի խոշոր գումար կորցելու տենչով՝ թուրք անունով են գիմում և 50 ֆրանք են ստանում այս սոսկալի յանդիմանութիւնների հետ միասին. «ամօ՞թ չէ որ անունդ փոխում ես. մենք գիտենք որ դու հայ ես և ով ես. աւելի լաւ չէր լինի որ իսկական անունովդ գիմէիր» :

Ձէ վերջապէս ամէն բանի չափն ու սահմանը կայ : Եթէ այդ հոգով, արիւնով, ուղեղով ու ծովով հայ թուրքերին էլ չենք ճանաչում, կը նշանակէ թէ թրքական բոլոր ազտոտ բարքերը մեր մէջ արմատացել են :

ՎԱՐՊՈ

ՏՈՒՐԱՊՈՒՆԻ ԱՇԽԱՐՀԷՆ

Ըսելու հարկ չիկայ, քանի որ գիտէք թէ մարտ ամիսը կը մօտենայ, հետզհետէ նոր տարբերուն համար կը նեղեն մեզ : Նամակէս չորս օր առաջ հարկահաւաքներուն ըրած բռնութիւնները սրտի ցաւով կը գրեմ : Ձեռք գիտեք թէ մինչեւ ո՞ւր պիտի հասնի աս բռնութեան վերջը : Աս անգամ հարկահաւաքները ամէն բռնութիւն ընելէն վերջ, 50ի չափ ալ կով, ոչխար քաշեցին տարին մէկվաթը ծախեցին տուրքերուն փոխարէն : 100 զրուշ արժող ապրանքը 50 զրուշի ծախեցին : Ի՞նչ արտամալի օր, ժողովուրդին լացը, կոճը մէկգի գիր. երբէք չի լսեց կառավարութիւնը անոնց խեղճութիւնը : Ու աս գեռ հին տուրքն է. հապա նորը, երկու տարուան տուրքերը եթէ զանձեն ի՞նչ պիտի ընենք :

Սիրելիներս, ալ բոլորովին մենք մեզ կորսնցուցինք. յիշաւի կալերէն արմարքները քաշեցին տարին այսքան կսկիծ չի

պատճառեց, բայց աս անգամ ուսն կառավարութեան ըրած աւարը մեզ կորսնցուց. 20 հատ էջ, 18 հատ կով, 12 ոչխար ամէնքը : Այն խեղճը որ մէկ էջ ունէր և ամէն գործ անով կը տեսնէր՝ քաշեց տարաւ ծախեց. ի՞նչ ընէ հիմա ան խեղճը :

Այն աստիճանի հասած ենք որ մինչեւ անգամ յարգը կը ծախեն տուրքերը զանձելու համար. երբէք չեն խնայեր, ձեռքերնին անցածը կը քաշեն, անկողին, ուտելիք, ախառն եւ այլն :

Մենք աս վիճակին մէջ ենք. աս մեր մտածմունքներուն, տառապանքներուն պատճառով միշտ մահը աչքերնուս առջեւ կուգայ : Դուք ալ ինչ որ գիտէք գրեցէ՛ք և մխիթարեցէ՛ք մեզ . . .

Տիվրիկ (Աշուշէն գիւղ), 26 Փետր.

ՄԱՔԱՍՏՈՒՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ուրիշ աւելի յարմար անուն չի կարողացայ բնորոշել այն քամիկներին բանակին. որ խրմբած են մաքսատան շուրջը. ով որ ցանկութիւն յայտնեց մաքսատան և ընկերութեան մէջ պաշտօն ունենեալ նա պէտք է նախ և առաջ հրաժարիմք ասի իր նախկին սկզբունքներին. նախկին դաւանանքներին և շնորհի այն կրօնն ու դաւանանքը ինչ որ մաքսատան ղեկավարներն են դաւանում. հակառակ դէպքում նա կարող է միանգամայն հեռու մնալ այն մաքսից թէ մաքսատանը կարող է պաշտօն ունենալ : Ահա այդ է պատճառը որ այնտեղ խմբած են մեծ մասամբ այնպիսի մարդիկ, որոնք մի քան պատրաստ են ասելու «մտնուը սեւ է» եթէ իրանց ղեկավարները այդ են պիտու : Ահա այսպիսի անդաւանանք մարդկանցից է բաղկացած այն խումբը որ յայտարարեցին հակառակորդը կոչելու յաւակնութիւնը ունի. դրանց մէջ կան անհատներ որոնք մի փամանակ Դաշնակցութեան անունով էին երգում իսկայսօր դառել են «Մաքսատանեան» այսինքն Դաշնակցութեան երդուած թշնամին, որովհետեւ հացի խնդիրն այդ է պահանջում, որովհետեւ նրանց ղեկավարներն էլ երդեալներին են, հարկաւոր է նրանց հաճոյանալ նրանց քահանայքին ծառայել : Եթէ այսպիսի ողորմելիներէ կազմած մեր հակառակորդ-

ների բանակը, ուրեմն շատ պարզ պէտք է լինի թէ որքան ողորմելի են այն միջոցները, որով ուղում են կոխ մղել մեր դէմ : Այսօր երբ Ատրպատականի օրւայ հարցը թեմակալ առաջնորդի ընտրութեան խընդիրն է եւ Դաշնակցութիւնը բացարձակ իր պրոպագանտան է սկիւզազնիւ պայքար մղելու քաջութիւնից զուրկ մաքսատան և ընկերութիւն տեսէք թէ՛ ինչպիսի ստոր միջոցների է դիմում հակառակորդին տապալելու համար : Երբեւի արդէն ընթերցողը նախկին նամակներիցս ծանօթ է որ Վեհ. կաթողիկոսի կոնգակի համաձայն գաւառները պէտք է իրանց պատգամաւորներն ունենան առաջնորդական ընտրողական ինդրում եւ այդ առիթը կոնգակի պատճէնները ուղարկած են գաւառները : Մաքսատան և ընկերութիւն հապճէպով իմաց է անում իր խոյի ներկայացուցչին, թէ միջոցների մէջ առանց խտրութիւն զնեցելու (եւ ուրիշ կերպ հասկանալ չեմ կարող) աշխատի իրանց ուղած մարդին ընտրել տալ : Այդ մարդը հրաման առնելուն պէս կը զինէ իր մի քանի զինուորները, կաթողիկոսական կոնգակը ձեռքն առնելով կընգնի տնէ տուն, քահանաներից մէկին գործակալութիւն խոստանալով, միւսին աւագերեցութեան, շատերին սպառնալիքներ անելով, ոմանց այլ խօստուներ տալով թղթի վրայ բաւական ստորագրութիւններ սեղնել կուտայ, թէ այսինչ մարդը մենք մեզ պատգամաւոր ենք ուղում : Բարեբախտաբար գործակալը վրայ կը հասնի եւ այդ թղթի անվաւերականութիւնը բացատրելով ընդհանուր ժողով կը գումարէ եւ պատգամաւոր ընտրել կուտայ, օրինաւոր քեզարկութեամբ՝ կընտրին այնպիսի անձինք, որ մեր անազնիւ երդեալները կը միան ամօթապարտ եւ սեւցած : Բայց ամօթ կա՞յ դրանց երեսին : Պարտնա՞յք սպարտական քաջութիւն ունեցէ՛ք մարդկանց հետ ազնիւ, գաղափարական կոխ մղելու : Թէ չէ այս տեսակի ստոր միջոցները ձեզ կը տանեն դէպի վերջնական անկումը :

Իսկ մաքսատան գործիք Աշաններ, թող որքան կուզեն փողոցին յատուկ լուտանքներ թափեն. սրա-նրա հասցէին մի «չախօսկա» ընկած կուսակցութեան հիւանդոտ օրգանի էջերում : Ազնիւ կոխ մղելը ասպետների գործ է եւ ոչ դրանց նման գաճաճների :

ՋԱՄԷՆ

Թաւրիզ, 15 Մարտ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏիկիՊէ, 5 Ապրիլ

Երէկ իրկուան Պ. Զօրեանցի վարժարանին մէջ լսարան մը ունեցանք, ուր խօսեցաւ անցորդ մը Պ. X. Զի նայելով որ լսարանը տեղի կուեննար մասնաւոր շրջանակի մը համար և ապա պատճառով ալ շատ քիչերու իմացուցուած էր բերանացի միայն, ասոր հետ մէկ տեղ, սրահը երկսեռ բազմութիւնով մը լեցուած էր:

Ատենախօսը շատ յստակ, պարզ և անսեթեթ ոճով մը պարզեց մօզի նախ իր արտասահմանէն ստացած տպաւորութիւնները: Յաշայտեց որ, մինչդեռ երկրին տառապեալ ժողովուրդը լուռ ու մուկ շատ անգամ առանց կուսակցութիւններու վրայ գաղափար իսկ ունենալու միմիայն մէկ անունի մը—ընկերութիւն—շուրջը հաւաքուած իր ազատագրութեան գործին համար կաշխատի. հոս, արտասահմանի մէջ, գործին տեղ գծուած հաշիւները, անձնական կռիւները կը տիրեն, ինչ որ գործի չգոյութիւնը կապացուցանէ: Մասնաւորապէս շեշտեց այն հակայեղափոխական քայլերն ու քարոզները, խճբըճանքներն ու անտեղի կռիւները զորս կը յարուցանեն արտասահմանի հայ թերթերուն մեծ մասը, խոստովանելով նաեւ այն բացառութիւնները, այն գովելի քայլերը զորս կառնէ արտասահմանի գաղափարուած երիտասարդութիւնը:

Պշտիկ գաղափարէ մը վերջ Պ. ատենախօսը շարունակեց իր խօսքը երկար կանգ առնելով յեղափոխութեան, անոր սկզբնա-

պատճառներուն, անոր անհրաժեշտ պահանջ մը ըլլալուն վրայ: Ըսաւ թէ՛ մենք խնդրող եղանք, փոխանակ իրաւունքնիս պահանջող ըլլալու, մեր «ինդրանք»ը հասաւ մինչեւ Պերլինի վեհաժողովը. ու այլ կերպ ալ չէր կրնար ընել ազգ մը որուն ստրկութիւնը օրօրոցէն ժառանգել ստրկեցուցած է իր մայրը, որուն դեռ մանկութեան աստեղէն արգիլուած էր դանակ ձեռք առնել, առարկելով թէ «անոր մէջը արիւն կայ»: Հետզհետէ դառն իրողութիւնները մեզ ցնցեցին, տեսանք թէ թշնամին կը յափշտակէ փոխանակ խնդրելու. ու կամաց կամաց մենք ալ սկսանք բնականօրէն դիմել բռնի ուժի: Ասկէց վերջը մենք խնդրող չենք ու չի պիտի ըլլանք. այլ պահանջող: Եւ այդպէս ցանկուն համար թէ ո՞րքան տարածուած է աս գաղափարը հայրենիքի ժողովուրդին մէջ, մասնաւորապէս վերջին դէպքերէն յետոյ, մէջ բերաւ շատ մը իրողութիւններ մեր յեղափոխական խումբերու կեանքէն, ժողովուրդին ձգտումներէն:

Ամբողջ ժամ մը խօսելէ վերջ, եղբակացուց թէ արտասահմանի հայը պէտք չէ անտարբեր մնայ աս ազատ երկրի մէջ, երբ անդին հայ ժողովուրդին դժբախտ բայց յեղափոխական դաւակները ամէն պատրաստակա՞նութիւն ցոյց կուտան կռուելու, շարժելու, ամէն անհատ, իր ուժերուն համաձայն, պէտք է աշակցի, օժանդակէ անոր, ոչ թէ իբր ուղորմութիւն այլ իբր նուիրակա՞ պարտականութիւն:

Պ. ատենախօսը մէկէ աւելի անգամներ բռնուն կերպով ծափահարուեցաւ: Հայկական երգե-

ցիկ խումբը երգեց մէկ երկու երգեր: Ներկաները շատ գոհ տպաւորութեան տակ մեկնեցան, անոր համար որ, խօսուածները չոր խօսքերու դէպ մը չէին գերասանական ձեւերով համեմուած... ինչպէս կընեն շատ մը ատենախօսներ, այլ բոլորը գաղափար, ճշմարիտ փաստեր, իրողութիւններ էին, միշտ անհատականէն դէպի հասարակականը անցնելով պարզուած ամէնուն ալ հասկնալի դառնալու համար:

Իբր արտասահման ապրող մը, հաւատացէք որ սրտի շատ ճնշիչ սեղմումով մը կեցայ հոն և ամշնալով մտիկ ըրի աղնիւ ու գիտակից յեղափոխական անցորդի մը դժգոհութիւններն ու զանգատները՝ ուղղուած դէպի արտասահմանի անտարբեր հայերուն և հակայեղափոխական թերթիկներուն, մանաւանդ անոր համար որ գիտեմ թէ յարգելի բանախօսին ըսածներէն ալ աւելին գոյութիւն ունին, անոր համար որ, անտարբեր դասակարգին ընթացքը չէ այնքան դատապարտելի՞ որքան զանոնք քաջալերելու աշխատող հակայեղափոխական թրքասէր թերթիկներունը:

ՀՐԱՆԴ-ԺԻՐԱՅՐ

ԼՕՐԷՆՍ, 22 Մարտ

Երկար լուծենէ մը վերջ կուզեմ «Շարժում»ի աշխատակցութիւնս վերսկսել. լուծեանս պատճառը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ իմ անձնական զբաղումներս էին. Շարժումի թղթակից Պարոն Յիսէ մեղադրած էր թղթակիցները ըսելով թէ արգեօք ինչ է պատճառը թղթակցութիւններու ընդհատման: Այժմ

սկսինք. «Նոր Աշխարհ»ի հայ գաղութի շնորհիւ թղթակիցներ բնաւ չեն նեղուիր նիւթի մասին, բնականաբար մեր ցաւերու մասին պիտի գրենք և մեր «տէրտու» մեզի պիտի լանք ու մենք պիտի դարմանենք մեր սրտի վէրքերը ու մեր աղտոտ բարքերը: Մեր գլխաւոր վերքերէն մին է կուսակցամտլական «ես»ը, կղերականութեան մեր մէջ սերմանած անվերջ պառակտումները և վաշխառուներու մեր մորթին տըզրուկի նման փակած արիւնը ծծելը, ու անոնք մեր յաւիտենական նիւթերը դառցած են. Ատենց մէկ չարիք որ ըսէք չի ծնի, օրինակ բերենք հոս մէկ քսանի նմուշներ կուսակցամտլական «ես»էն որուն արդիւնքը եղաւ միմեանց գէժ սոսկալի ատելութիւն ու աս սոսկալի լարումը, Ալ երեւակայեցէք թէ ինչքան չեզան. առաջ եկաւ մատնութիւն. մարդասպանութիւն, եղբայրասպան կռիւ: Ի՞նչ սոսկալի ստորնութիւն: Օրինակներ մէկէ աւելի են. Ուստի Պ. Վ. Ռամբանի ծելել ուղիւնին, նոյնիսկ մի զարմանաք այսօր ալ հաւատարման աղբիւրէ կիմանանք որ Պոսթմի մէջ ալ կրկին նոյն ծեծը այս անգամ ազգասէր («») հերոս («») Արզուեան, Զիթեան, և Արամ Ազգանազ ըսուած խիստարները են: Մարտ 29ին ժամը 4ին Պ. Վ. Ռամբան իր սենեակը գացած միջոցին Արզուեան Վ. Ռամբանի առաջը կտրելով, ինչպիսիք ծանօթացուներէ վերջ, բացատրութիւն կը պահանջէ Պոսթմի «Զելո» ստորագրութեամբ և Պ. Վ. Ռամբանի «յեղափոխական խաչագողութիւն» խորագրով խրմբագրականին: Վ. Ռամբան կարճ պատասխա՞ւ մը տալով կսկսի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԱՍԱՆԴՆԵՐԸ (ԿԻ ՏՐ ՄՕՐԱՍԱՆ)

(Շար. նախորդ քիւիկ և վերջ)

- Յետոյ Լանթէն մտաւ ուրիշ, «Սաղաթութիւն» անունով խանութը: Երբ գոհարարվածա՞նը մանեակը տեսաւ, բացակայեց:
- Կը ճանչնամ, ինձմէ գնուած է: Լանթէն չփոթեցաւ և հարցուց:
- Որչա՞փ կարծէ:
- Մասնա՞ն էմ 25 հաղար ֆրանքի, բայց պատրաստ եմ 18 հաղարի ետ գնել, սակայն, օրէնքի համաձայն, դուք պարտաւոր էք ինձի պարզել թէ այդ մանեակը ի՞նչպէս ձեր ձեռքը անցաւ:
- Այս անգամ Լանթէն ապշու մէն նստեցաւ և ըսաւ:
- Խնդրեմ գօտարութիւնը կրէք զայն ուղարկութեամբ գննելու... Ես մինչեւ օրս զայն կեղծ կը կարծէի:

- Խնդրեմ ինձի հաղորդեցէք ձեր մականունը՝ պատասխանեց գոհարարվածա՞նը:
- Մեծ դոհուեակութեամբ, իմ մականունն Լանթէն է. ներքին գործերու նախարարութեան մէջ պաշտօնեայ եմ, Մարտիրոս փողոցի մէջ համար 16 տունը կը բնակիմ:
- Գոհարարվածա՞նը իր մատենը բացաւ, նայեցաւ և ըսաւ:
- Այո, ճիշդ է. այդ մանեակը 1876ի յուլիս 20ին զրկուած է տիկին Լանթէնի, ձեր բնակարանի հասցէով:
- Երկու պարոնները նայուածքները փոխադարձաբար իրարու վրայ միտցին, պաշտօնեան ապշումէն շուտարած, իսկ գոհարարվածա՞նը կարծես զոզի մը նայելով:
- Գոհարարվածա՞նը շարունակեց:
- Մանեակը օրուան մը համար իմ քովս թողուցէք, ես ձեզի ստացագիր մը կուտամ:
- Ատոր դէմ, ի հարկ է ըսելիք մը չունիմ, մրմոց Պ. Լանթէն և ստացագիրը գրպանը գնելով դուրս ելաւ:
- Լանթէն աննպատակ և մոլորած ի

- մը պէս սկսաւ թափառիլ Փարիզի փողոցներու մէջ. կը փորձէր դատել իրողութիւնը հասկնալ:
- Իր կինը ատանկ սուղ բան մը չէր կրնար գնել. ի հարկ է ոչ. ուրիմն այդ նուէ՞ր էր, նուէ՞ր, որմէ՞ն ինչո՞ւ համար:
- Լանթէն կեցած տեղը գամուած մնաց. տանջող կտակածը սիրտը մտաւ:
- Ա՞ն, ուրիմն միւսներն ալ, ամէնքն ալ ուղագին են, և նուէրներ:
- Գլուխը պտտեցաւ. իրեն այնպէս կուզար թէ ծառերը վար կիյնան, երկիրը կը շարժի: Ձեռքերը տարածեց և ուշաթափ դետին փուռեցաւ:
- Լանթէն դեղարանի մը մէջ ուշքի եկաւ, ուր գինքը անցորդները տարած էին. պատու իրեց գինքը իր տունը տանել, և հոն իր սենեկին մէջ գոցուեցաւ:
- Պ. Լանթէն մինչեւ երեկոյ շարունակ դառնագին լացաւ. իրերսը թաշկինակով կը ծածկէր ձայնը դուրս չելլալու համար:
- Վերջը մահճակալին վրայ պատկե-

- ցաւ, և խոնջանքէն ու վշտէն յոգնած՝ ծանր քունով մը քնացաւ:
- Արեգակի ճառագայթները զայն արթնցոցցին. դանդաղօրէն տեղէն ելաւ ու պաշտօնատեղին գնաց:
- Շատ ծանր էր անցուցած յուզումէն վերջը աշխատելը. մտածեց ներողութեան նամակ մը գրել իր պիտին՝ չեթախուէն համար, վերջը մտաբերեց որ գոհարարվածա՞նին քովը պիտի երթոյ՞. ամօթէն կարմրեցաւ:
- Երկար մտածեց ու համոզուեցաւ որ չէր կարելի մանեակը խանութը թողուլ. հագուեցաւ ու դուրս ելաւ:
- Եղանակը հրաշալի էր. կապտագոյն երկինքը ժպտագին քաղաքին վերեւը կը տարածուէր. հարուստները ձեռքերնին գրպաննին դրած կանցնէին, Լանթէն զանոնք դիտելով մտածեց:
- Որչափ մեծ երջանկութիւն է ստակ ունենալը: Ստակով ամէն վշտէ կազատիս, ուղած տեղդ կերթաս, ամէն միջոց կուեննաս զուարճանալու: Ա՛հ, եթէ ես հարուստ ըլլայի, Լանթէն զգաց որ անօթի է, եր-

քաղել. յանկարծ բռունցքի հա-
րուած մը կուտայ հերոս Արզու-
եանը, ամբողջ կը խոնորի շորս
կողմէն. Զի թծեան պատուելին կը
վազէ իբրեւ թէ զատելու. ու
ամբար կը միջամտէ. Ահա հա-
մառու պատմութիւնը. կը յու-
սամ թէ «Հայրենիք»ին մէջ
մանրամասն պիտի գրուի այդ
վայրենիութեան մասին. Մատ-
նութիւն ի կիլիկիա, կիպրոս
Պուլկարիա: Ապա կը շարունակ
իր սեւ սգէմին տակ թագ-
նուած մեզի «Առաւելոյ ըրու-
թիւնը» քարոզեց ու ինքը սու-
տանայի երկրպագու եղաւ. Գո-
ղութիւն, մատնութիւն և կեղ-
ծութիւն եթէ կուզէք անբարո-
յականութիւն ալ անոնց մէջն է.
Ի զուր աշխատեցաւ ամենախայ-
տառակ ապօրինութեանց վերջ
մը տալու համար:

Ահա նոր աշխարհի հայերուն
տղեկը արքերը. մէկ ծայրէն բռնէ
մինչեւ միւս ծայրը նոյն խուլ
ու յաւառ պայքարները կը մըզ-
ուին. Այցելած քաղաքներս յի-
շեմ միայն, Լոմէլ, Հիվրհէլ,
Լին, Պոսթօն, Ուստր, Փիշպուրկ,
Նիշուի և Նիսպրիփորթ ամէն
տեղ ալ նոյն վիճակն է:

ԻՊՏԵԱԼ

ՄԱԿԵՌՈՒԱԿԱՆ ՆՈՐԸՆՏԻՎ ԳՕՄԻԹԷՆ

Ներկայ կառավարութիւնը երկ-
րի օրէնքի հիման վրայ ձերբա-
կալեց բարձրագոյն գոմիթէին
այն անդամները որոնք ի բացա-
կայութեան դատապարտուած էին
Պուլքէշի մէջ. Զերբակալուած-
ներու դատը պիտի տեսնուի
պուլկար գատարանի մէջ. Կա-
ռավարութեան հակառակօրէնքը
և բարձրագոյն գոմիթէի թշնա-

մինները ուղեցին աշխարհին հըռ-
չակէլ թէ ներկայ կառավարու-
թիւնը մտադիր է շնչել Մակե-
դոնական կազմակերպութիւնը օ-
տարներու ճնշումէն զրոյացած.
Պարոն Քարապէլովի օրգանը
գոմիթէի անդամներու ձերբա-
կալման ձեւը պատարակելով հան-
գերձ, բացորոշ կերպով յայտա-
բարեց թէ՛ անդամները ձերբա-
կալուած են երկրի օրինաց հա-
մաձայն և կառավարութիւնը եր-
բէք միտք չէ ունեցած Մակեդո-
նական կազմակերպութիւնը ջրն-
ջել Պուլկարիոյ մէջ, որովհետեւ
ան ալ իր գոյութիւնը հիմնած է
երկրին օրէնքներուն վրայ: Ար-
տաքին գործոց նախարարն ալ
խիստ պատասխան մը տուաւ Նէ-
ճիպ Մէլհամէի, Սօֆիայի թուրք
քոմիտէին, որ կը պահանջէր
Մակեդոնական կազմակերպու-
թեան ջնջումը:

Իրողութիւնը եկաւ հաստատեց
որ իսկապէս Պ. Քարապէլով օ-
րէնքի հիման վրայ կը գործէր:
Ամէն ինչ ազատութեամբ տեղի
ուեցաւ Սօֆիայի մէջ Մակեդո-
նացիներու արտակարգ գոնկրէին:
Գոնկրէին կը մասնակցէին 150ի
չափ պատգամաւորներ: Բարձրա-
գոյն գոմիթէի անդամներ ընտ-
րուած են վեց երիտասարդ յայտ-
նէ հայրենասէրներ, որոնք ի-
րենց մէջէն պիտի ընտրեն նաև
նախագահը:

- Ընտրուողները հետեւեալներն
են.
1. Սթոյան Միխայէլովսքի, յայտնի սովորիք բանաստեղծ.
 2. Տօքթօր Վլատով, Բուս-
չուքի բժիշկներէն.
 3. Վլատիմիր Տիմիթրէֆ, Վառ-
նայի յարգի երիտասարդ փաս-
տագրաններէն.
 4. Իվան Գէփով Սօֆիայի կիմ-

նազիայի նախկին ուսուցիչ, ներ-
կայիս «Իզլիքէվո սմազրի իւմ-
բագիր»:

5. Կէօրկի Մինքով, նախկին
գոմիթէի անդամ, որ չը ձերբա-
կալուեցաւ.

6. Կէօրկի Պէթրով նոյնպէս
նախկին անդամ որ չը ձերբա-
կալուեցաւ: Այս երկու վերջին-
ներուն անունները Միխայիլովսկի
գործին մէջ չը կային և ատոր
համար ալ պուլկար կառավարու-
թիւնը չը ձերբակալեց:

Կը շնորհաւորենք հայրենասէր
երիտասարդներու այդ դժուարին
գործին զլուխ անցնելը և կը
մաղթենք որ Մակեդոնիոյ օգ-
նութեան գործը աւելի մեծ յա-
ջողութեամբ առաջ տանին:

«ԺԱՄԱՆԱԿ»

1901 Յուլիս 1ից Պարիզում կըս-
կար լոյս տեսնել հայերէն լեզուի
գրական. հասարակական, գեղար-
ուեստական, քաղաքական հանդէսը:

Ժամանակը կուսնայ այն բաժին-
ները, ինչ որ ունին երոպական
գրական հանդէսները. ստանձնագէս
ուշադրութիւն դարձնելով գիտնա-
կան և գեղարուեստական բաժիննե-
րի վրայ:

Ժամանակին աշխատակցելու պատ-
րաստականութիւն են յայտնել բազ-
մաթիւ հայ և երոպացի յայտնի
հեղինակներ, որոնց երկերն արդէն
ստացել է խմբագրութիւնը:

Ժամանակը բաղկացած կը լինի
5 տպագրական թերթերից (80 երես
La Revue et Revue des Revues հան-
դիսի դիբըով):

Ժամանակի առաջին համարը լոյս
կը տեսնի ճիշդ 1901 թ. ապրիլի յու-
լիս 1ին և ներկայ թվականին կը
հրատարակուի երկու ամիսը մի ան-
գամ, այն է յուլիս 1. սեպտեմբեր
1, նոյեմբեր 1, իսկ սկսած 1902
թվականի յունուար 1ից կը հրատա-
րակուի իւրաքանչիւր ամիս:

Հարկ եղած դէպքերու մ. ժամանակը

կը լինի պատկերազարդ և կը սպա-
գրէ եւրոպական երկերի բնագիրը
եւրոպական լեզուներով, հայերէն
թարգմանութեան հետ միասին:

Բացուած է բաժանորդագրութիւն
1901 և 1902 թվականներին, Բաժա-
նորդագրութեան պայմանները պար-
զուած են հետեւեալ աղբյուրակի մէջ:

Բաժանորդագրութիւն 1901 թվականի
(կիսամեակ)

Ռուսիա 3 ռուբլի
Անգլիա 7 շիլինգ
Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաս-
տան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպ-
տոս, Յունաստան, Աւստրիա 8 ֆր.
Ամերիկա 1 դոլար (ոսկի)

Բաժանորդագրութիւն 1902 թվականի
(12 զիտ)

Ռուսիա 10 ռուբլի
Անգլիա 1 ֆետ. ստերլին
Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաս-
տան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպ-
տոս, Յունաստան, Աւստրիա 25 ֆր.
Ամերիկա 5 դոլար

Բաժանորդագրութիւն 1901 և 1902
թվականներին հուլիս (15 զիտ)

Ռուսիա 12 ռուբլի
Անգլիա 1 ֆետ. ստերլ. և 7 շ.
Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաս-
տան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպ-
տոս, Յունաստան, Աւստրիա 30 ֆր.
Ամերիկա 6 դոլար

Ժամանակի առաջին համարը կու-
ղարկուի միայն այն բաժանորդնե-
րին որոնք կստորագրուեն մինչեւ
ներկայ թվականի յունիս 1ը (Ն. Տ.)
Այդ թվականից յետոյ խմբագրու-
թիւնս չէ խոստանում ՁՑ 1ը, որ պի-
տի տպագրուի այն քանակութեամբ
ինչ քանակութեամբ ստորագրողներ
լինեն մինչեւ յունիսի 10ը (Ն. Տ.):
Ժամանակի 1 համարը Պարիզի
փոստին կը յանձնուի ճիշդ յուլիսի
1ին (Ն. Տ.):

Ամենայն տեղերից դիմել հետե-
ւալ հասցէով

S. HAKHOUMIAN
Directeur de la Revue «JAMANAK»
64 rue Claude Bernard Paris France

կու օր էր որ հաց չէր կերած: Բայց
գրպանը դատարկ էր. ու յանկարծ
մանեակը յիշեց. 18 հազար ֆրանք...
կտրիկ գումար մը:

Անցաւ գոհարավաճառի փողոցը,
և սկսաւ խնուր թիւն առջիւ երթե-
լիկի: 18 հազար ֆրանք. քսան ան-
գամ ուղեց ներս մտնալ բայց ամըչ-
ցաւ:

Բայց քաղցը զինքը կը տանջէր.
Իսկ գրպանի մէջ ստակ մը չը կար:
Որոշեց շտապով դէպի խանութ եր-
թալ, այնչափ շտապով որ ալ մտա-
ծելու միջոց չունենայ, և իսկոյն
ներս մտաւ:

Գոհարավաճառը զինքը դիմաւո-
րեց ժպիտով մը, և շտապի սրբալի
կերպով աթոռ առաջարկեց ու ը-
սաւ:

— Ես տեղեկութիւններ քաղեցի.
և եթէ դուք ձեր դիտաւորութիւնը
փոխած չէք, պատրաստ եմ առաջար-
կած գումարս վճարել:

Լանթէն մրմռաց.

— Ի հարկէ փոխած չեմ.

Գոհարավաճառը գրամարկղէն 18
հազարնոց թղթագրամներ հանեց,
և Լանթէնի յանձնեց. Լանթէն

ստացազիրը ստորագրեց և զոգո-
ջուն ձեռքով ստակները գրպանը
դրաւ:

Դուրս եկած միջոցին դարձաւ զկպի
գոհարավաճառը որը դարձաւ կը
ժպտար և աչքերը մէկ կողմ դարձնե-
լով ըսաւ:

Ես ունիմ, ունիմ, ուրիշ թանկա-
գին իրեր ալ. զանոնք ստացեր եմ.
անոնք բոլորն ալ ժառանգութիւն
են... անոնք ալ գնել չէք ուզե՞ր:

— Մեծ հաճոյքով:

Մասնադրուեցին մին գուրս ելաւ
խնդալու իսկ երկրորդը սկսաւ
բարձր ձայնով հազալ:

Լանթէն, առանց ուշադրութիւն
դարձնելու, թէեւ կարմրած, բայց
լրջօրէն ըսաւ:

— Իսկոյն կը բերեմ.

Կտք նստեցաւ և գնաց միացած-
ներն ալ բերելու:

Ժամէ մը խանութ վերադարձաւ,
նոյնիսկ առանց նախաձայն ընելու:
Գոհարավաճառի հետ միասին սկսաւ
զննել և գիները նշանակել:

Գրեթէ ամէնքն ալ այդ խանու-
թը ծախուած են. հիմա Լանթէն գնի
մասին երկար կը խօսէր. կը բարկա-

նար, կը պահանջէր որ հաշուետե-
րակները ցոյց արուին. որչափ գինը
կը բարձրանար, այնքան ալ ինքը
իր ձայնը կը բարձրացնէր, Բոլոր
զարդերը ընդամենը 6—7 կտոր 196
հազար ֆրանք բռնեցին:

Գոհարավաճառը հեզնելով նկա-
տեց.

— Ինչպէս կերուի այս անձը իր
ամբողջ խնայած գրամագրութիւնը զո-
հարներու վերածած է:

Լանթէն պատասխանեց լրջօրէն.

— Այդ միջոցը գրամ սեղաւորելու
միւս միջոցներէն գէշ չէ:

Եւ ուղեց երթալ գոհարավաճառի
հետ համաձայնելով. միւս օրը նոր
գնահատում ընելու Լանթէն երբ գուրս
ելաւ վանաստեան կոթողին այնպէս
մը նայեցաւ, որ կարծես թէ կուզէր
վրան մաղցիլ: Ինքզինքը այնքան
թեթեւ կը զգար, որ կը կարծէր թէ
պիտի կրնար կայսեր արձանին կա-
տարը բարձրանալ:

Գնաց նախաձայն ձայնարան մը նա-
խաձայնելու և շիշը 12 ֆրանքնոց
գինի խմեց:

Յետոյ կառք վարձեց և սկսաւ
զրօսնուլ. անցնող կառքերու վրայ

արհամարանքով կը նայէր և մեծ
փափագ կղզար անցորդներուն գոչե-
լու:

— Ես ալ հարուստ եմ. 200,000
ֆրանք ունիմ:

Յանկարծ միտքն ինկաւ պաշտօ-
նատեղին, գնաց հոն, ազատարար
մտաւ իր պիտին սենեակը և յայ-
տարարեց:

— Եկայ ձեզի յայտնելու որ հրա-
ժարականս պիտի տամ: Երեք հարիւր
հազար ֆրանք ժառանգութիւն ստա-
ցայ:

Այցեկեց ընկերներուն, իր ծրա-
գիրները յայտնեց ապագայի մասին
և գնաց Անգլիական քաֆէն ճաշե-
լու:

Բարձր չրջանի պատկանող մարդու
մը հանդիպելով չը կրղաւ ինքզինքը
զսպել և յայտարարեց որ 400,000
ժառանգութիւն ստացեր է:

Առաջին անգամ ըլլալով թատրոնի
մէջ չի յորանջեց...

Վեց ամիսէն ետքը երկրորդ ան-
գամ ամուսնացաւ. երկրորդ կինը
պատուաւոր տիկին էր, բայց ան-
սանելի:

Ան զինքը բաւական տանջեց:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Էջմիածնի միաբան արժանապատիւ Խաչիկ վարդապետ ամբողջ ձմեռը խոնաւ նկուղի մէջ սպրեւելով, Էջմիածնի քովերը պեղումներ կատարել է, որոնց հետեւանքով երեւան եկած է հայոց ամենէն հին եկեղեցիներէն մին՝ Զուարթնոց եկեղեցին որ իր ճարտարապետութեամբ բոլորովին կը տարբերի մեր հին վանքերէն ու եկեղեցիներէն։ Այդ աւերակներուն մէջ աւելի աչքի կը զարնէ մեծ բեւեռագիր արձանագրութիւն մը որ հիմա կը հետաքրքրէ ամբողջ գրական աշխարհը։

— Ներսէս եպիսկոպոս Արաւանեան Մուշի վարժապետներէն մին քահանայ ձեռնագրած է և այդ քահանան սկսած է ժողովուրդին քարոզներ տալ. իր միւս ընկերները որոնք այդ սեռակ շնորքէ մը զուրկ են, սկսած են եկեղեցիներ մէջ պօռալ «խենթ է» ու պատարագի ժամանակ թողուլ դուրս ելլալ անկարգութիւն ձգելով ժողովուրդին մէջ։

— Պօլսոյ ազգային հիւանդանոցի մատուռին յարակից փայտաշէն տաղաւարը հրդեհուել է, բայց ապահովագրուած ըլլալով 200—250 ոսկի պիտի ստացուի։ Հրդեհը միայն պաշտօնէից ջանքերու շնորհիւ տարածուած չէ։

— Կովկասի Ախալքալաք գաւառի հայ գիւղացիներու վիճակը այս տարի ալ սնտանելի է, գրեթէ սով կը տիրէ հոն։

«Մշակ» լրագիրը հանգանակութիւն բացած է և արդէն երկու հազար լուպիէն աւելի հանգանակած է։

— Գէորգ Մ. վարդապետ Նալպանդեան Սօֆիայի հայ գաղութին հովիւ կարգուած է։

— Պուրկազէն կը փնտռեն Քերոք Ստեփանեան անունով անձը Զիմկաճակի Կարմիր գիւղացի, որ վերջին գալթականութենէն ի վեր կորսուած է։ Տեղը գիտցողը լծող դիմէ Պուրկազ Պատմաշեանի սրճարան, Մ. Ստեփանեանի։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանը որոշած է արտօրել այն սպանները, որոնք երկրաշարժի միջոցին Տօլմա-Պահճէին պալատին պատուհանները կոտրելով դուրս փախեր էին։

— Պուրկար կառավարութիւնը խիստ դիմուկներ ըրած է թուրք կառավարութեան Մակեդոնիոյ մէջ բարենորոգումներ մտցնելու ուստի գետնին ալ միջամտած է, և ատոր շնորհիւ բաւական պուրկարներ բանտերէն ազատ արձակուած են։

— Թուրք կառավարութիւնը

կրկին որոշեր է դիմել եւրոպական պետութիւններու որ թուրքիոյ մէջ հաստատուած եւրոպական փոստաները վերցուին։

— Հանրային պարտքի վարչութեան այս տարուայ հասոյթը անցեալ տարուայ մարտի հասոյթէն 7000 ոսկի աւելի եղած է։

— Հունգարացի հռչակաւոր արեւելագետ Վուլպէրի կրկին Պօլիս եկած է, ինչպէս կերելի նորէն ոսկիի կարօտը կը քաշէ։

— Այսուհետեւ լրագիրներուն և տպարաններուն արտօնագրերուն վրայ 100 դրուշնոց Կրոշմաթուղթեր պիտի փակցուին, որոնցմէ եկած արդիւնքը թուրք գաղթականներու զետեղման ծախքին պիտի յատկացուի։ Կրկին ամենէն շատ վճարողը հայերը պիտի ըլլան։

— Դատական նախարարութիւնը պահանջած է որ նախապէս ելած սուլթանական քրտէի մը համաձայն, որոշուի թէ որ դատերը քաղաքային դատարաններու ձեռնհասութեան կը վերաբերին և որոնք ճէրիի դատարաններուն։

— Թրքական «Սէրվէթ» լրագիրը կը հաղորդէ թէ Պէլլուրթէն իրեն գրած են որ Անվերսէն հոն զրկուած գարեջուրի տակառներուն մէջ զէնքեր գրտնուել են, և իբր թէ այդ զէնքերը հայերուն կը պատկանին եղեր։

Զ Ո Ւ Ի Ց Ե Ր Ի Ա

Ժընէվի մէջ գտնուող ուսուսանողները մեծ ցոյց մը ըրեր են ուս հիւպատոսարանի դիմաց։ Ռուս կառավարութեան պահանջով զուրկուելու կառավարութիւնը շատ մը ուսանողներ ձերբակալել է և որոշեր է խռովարարներէն վեց հոգի իր երկրէն աքսորել։ Զուրկուելու մամուլին մէջ մասը խիստ լեզու գործածել է ուսանողներուն դէմ։ Ռուս ուսանողներու կողմէն նամակ մը տպագրուել է «Ժընէվուս» թերթին մէջ ի պատասխան զուրկուելու մամուլին այդ վարմունքին։

Յաջորդ թուով այդ նամակի բովանդակութիւնը կուտանք մեր ընթերցողներուն։

Ս Պ Ա Ն Ի Ա Ե Ի Փ Ո Ր Փ Ո Ի Գ Ա Լ

Այս երկու երկիրներուն մէջ հակակրակական շարժումը հետպահեմ կը ծաւալուի։ Ամէն տեղ կը գոչեն թող ճիզուրիթները կորին, Իտալական և Ֆրանսական հիւպատոսարաններուն առջև հակակրակական ցոյցեր կընեն այդ կառավարութիւններուն, որոնք կտրուկ միջոցներու դիմել սկսած են կաթուղի կղերին և ճիզուրիթներուն հանդէպ։

Չ Ի Ն Ս Ա Տ Ա Ն

Տակաւին Բէքինի մէջ եղած հրդեհին պատճառը յայտնի չէ։ Շուարքքըֆ զօրավարը հրդեհին զոհ գացած է։ Վալտէրսէ և գերման սպաններէն շատերը իրենց ունեցածները կորսնցուցեր են։

— Հաշտութեան բանակցութեանց հիմակուան ընթացքին նայելով, հաւանական կը նկատուի որ մինչեւ վեց շաբաթ հաշտութիւնը կնքուի, ուրկէ յետոյ Զինաստանի արքունիքը Բէքին պիտի վերագառնայ, Հատուցմանց մասին Պէլլինի «Բօսթ» լրագիրը կը հաղորդէ որ իւրաքանչիւր պետութեան պահանջած գումարին քանակութիւնը դեռ յայտնի չէ։ գերման կառավարութիւնը 12 միլիոն անգլիական ոսկի կը պահանջէ։ Գերման հպատակներուն անհատական պահանջները այդ գումարին մէջ չեն։

— Բէքինէն կը հաղորդեն որ Զինաստանի արքունիքը որոշած է միջազգային զօրքերու մեկնումէն վերջը միայն Բէքին վերագառնալ։

— Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ 76,000 ուս զօրք կազմու պատրաստ են Մանչուրիա երթալու։

— Քանի մը Անգլիական թերթեր կը հաղորդեն որ Ռուսիան պատրաստ է Զինաստանէն տուգանք պահանջել միայն 10 միլիոն ոսկի, եթէ Զինաստանը Ռուսիոյ հետեւեալ պահանջները չը կատարէ։

1. Պիտի ստորագրէ Մանչուրի վերաբերեալ պայմանագրութիւնը։

2. Սիպեիոյ երկաթուղիին վերաբերեալ յայտնի զիջումներ ընէ։

— Ֆրանսական զօրքերը մեծ ճիզեր թափել են գերմանացիները պալատի հրդեհէն ազատուլ համար։

Ա Ն Գ Լ Ի Ա Ե Ի Ճ Ա Ռ Ո Ն

Ղոնտոնի քաղաքական շրջանակներու մէջ կը խօսուի որ Անգլիա և Ճապոն գաշնակցութիւն մը կնքել են Ռուսիոյ ծրագրերը հակակշռելու և Զինաստանի ամբողջութիւնը բացարձակապէս պահպանելու համար։

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Անգլիոյ ելեւմտական նախարարին ցուցուցած հաշիւներէն կը հասկցուի որ Թրանսվալի պատերազմի համար ներկայ տարեշրջանին մէջ 68,620,000 ոսկի ծախք եղած է։

— Թրանսվալի կարավարի Ալֆ. Միլնէր երեք ամիս արձակուրդով Անգլիա մեկնել է կը յուսացուի թէ աս պարոնին

բացակայութեանը աւելի դիւրի կը լլայ Թրանսվալի հետ հաշտութեան բանակցութիւններ կատարելը։

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Պուէնոս Այրէսէն Ամերիկեան թերթի մը կը հեռագրեն թիւրքարիոյ ոստիկանութիւնը վաւերագրեր ձեռք բերած է, որոնցմով կը հաստատուի թէ Փարսի թեան մը ծրագրեր կազմուած Գերմանիոյ, Ռուսիոյ կայսերան, և Իտալիոյ թագաւորին զահաժառանգին կեանքերու դէմ։

Ս Ե Ր Պ Ի Ա

Ապրիլ 6ին Պէլլուրթը հանդիսաւոր կերպարանք ունէր նախ Մայրաքաղաքին թուրքերու ձեռքէն ազատելու տարեգարձին, Կրկնորդ նոր սահմանագրութեան հռչակումին պատճառաւ։

— Նոր սահմանագրութեան առիւ Նախարարութիւնը ի հրաժարականը տուել է, բայց թագաւորը կրկին նոյն նախարարութեանը յանձնել է կառավարութիւնը։

Թագաւորի նշանակած ծերանկոյտի 30 անդամներէն 11 արմատականներ են, 10 յառաջագիմական, 4 ազատամիտներ և 5 չէզոք։

Սերպ ժողովուրդը շատ դժուար կերելի այս նոր սահմանագրութեան։

Թ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկէն ստացուած հեռագրերու համեմատ չորս հինգ օր առաջ Վարշավայի Օտէսայի և Վիպուրկի մէջ խռովութիւնները վերսկսուել են։

— Պաշտօնական լրագրերը ճանուցանէ որ համալսարաններու ուսուցչապետները կրթական նախարարի նախագահութեամբ ժողով մը ըրել են և որոշել են որ ապրիլին համալսարանները բացուին, և դասերը շարունակուին, որովհետեւ զոյց մնալը աւելի վնասակար է։

Խ Մ Ա Մ Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Կ Ն Ա Ր Փ Ո Ւ Մ Մ Ի

Կը տպագրուին ամէն լեզու այցետոմս, հասցէտոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ։

Գինները յոյժ դիւրամատչելի ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

Յ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր Ը Կ Ա Ն Խ Ի Կ

Отговорникъ: Д-ръ МЪЛЪРДИЧЪ ВАРТАНЪ